ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 134 – Ա **29 հունիսի 2018 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 27-ի նիստի արձանագրությունը

կարգադրում եմ՝

1. Զորակոչիկ Արթուր Ռոբերտի Հայրապետյանի ընտանեկան դրությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Գալոյան Մամիկոն	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ, նախագահ
Տոնոյան Հովսեփ	- Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ
Ասպատուրյան Սասուն	- ՀՀ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի սպա

2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրության արդյունքները մինչև 2018 թվականի հուլիսի 6-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային զորակոչային հանձնաժողովին՝ Արթուր Ռոբերտի Հայրապետյանի պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման հարցը քննարկելու համար:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք. Գավառ